# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Հրավերի պարզաբանման մասին

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 29-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն**

**Ընթացակարգի ծածկագիրը՝ <<ՁՀ-ԷԱՃԾՁԲ-19/3>>**

**Չարենցավանի համայնքապետարանի** կարիքների համար **միջոցառումների կազմակերպման ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ՁՀ-ԷԱՃԾՁԲ-19/3>>** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2019 թվականի հունվարի 26-ին** ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ **2019 թվականի հունվարի 29-ին** տրամադրված պարզաբանումները:

Հարցադրում 1: Կանանց միջազգային օր՝ 1. <<Միեր Մկրտչյան>> արտիստական թատրոնի դերասանները մասնակցելու են հասարակական հիմունքներո՞վ և ո՞վ է ապահովելու կապը նրանց հետ:

Պարզաբանում 1: Կանանց միջազգային օրվան նվիրված ներկայացման մասնակիցները կարող են լինել նաև այլ թատրոնի դերասաններ, մասնակցելու են ոչ հասարակական հիմունքներով (վճարովի), նրանց հետ կապն ապահովելու է կրթ., մշ., սպ. երիտ. և սոց. աջակցության բաժինը:

Հարցադրում 2: Բերքի տոն (սեպտեմբեր)՝ Միջոցառում <<Գանգրահեր տղա>> հուշահամալիրի տարածքում՝ 1. 12 տաղավարների (3x3մ) ձեռքբերումը արդյո՞ք ենթադրում է տաղավարների վարձակալություն թե՞ սեփականության իրավունքով գնում: 2. Քանի՞ աստղ է նախատեսվում <<շոու ծրագիր աստղերի մասնակցությամբ>> իրականացման համար: 3. Քանի՞ հատ փոխադրամիջոց է անհրաժեշտ վարձակալել և քանի՞ անձի համար նախատեսված, խնդրում եմ հստակեցնել ուղղությունները:

Պարզաբանում 2: 1⃣ Տաղավարները ձեռք են բերվելու վարձակալությամբ: 2⃣ <<Շոու ծրագրի>> իրականացման համար նախատեսվում է 3 աստղի մասնակցություն: 3⃣ Անհրաժեշտ է վարձակալել 2 փոխադրամիջոց՝ 1 բեռնատար, 1 մարդատար՝ 25 անձի համար, ուղղությունը՝ Չարենցավան համայնքի Ֆանտան, Կարենիս, Ալափարս, Արզական, Բջնի գյուղական բնակավայրերից դեպի <<Գանգրահեր տղա>> հուշահամալիր:

Հարցադրում 3: Գրադարանավարի օր (հոկտեմբերի 7)՝ 1. Քանի՞ անձի համար է նախատեսվում ֆուրշետ կազմակերպել:

Պարզաբանում 3: Ֆուրշետը նախատեսվում է 30 անձի համար:

Հարցադրում 4: Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներ՝ 1. Որտե՞ղ են կազմակերպվելու միջոցառումները, 2. Թատերական խմբերը արդյո՞ք մասնակցելու են հասարակական հիմունքներով և ո՞վ է ապահովելու նրանց հետ կապը:

Պարզաբանում 4: 1⃣ Ամանորյա միջոցառումները կազմակերպվելու են Չարենցավան համայնքի <<Ա⃣ Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի դահլիճում: 2⃣ Թատերական խմբերը մասնակցելու են ոչ հասարակական հիմունքներով (վճարովի), նրանց հետ կապն ապահովելու է կրթ., մշ., սպ. երիտ. և սոց. աջակցության բաժինը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **<<ՁՀ-ԷԱՃԾՁԲ-19/3>>** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Շ. Հարությունյանին:**

Հեռախոս՝ **0226-4-34-34**:

Էլեկտրոնային փոստ՝ **qaxgnumner@mail.ru**:

<<ՉՀ-ԷԱՃԾՁԲ-19/3>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

| | |
|---|---|
| _____ *(ստորագրությունը)* | **Բ. Բալբաբյան** |
| _____ *(ստորագրությունը)* | **Վ. Բարսամյան** |
| _____ *(ստորագրությունը)* | **Ա. Ծերունյան** |
| _____ *(ստորագրությունը)* | **Ա. Զաքարյան** |
| _____ *(ստորագրությունը)* | **Ս. Հովհաննիսյան** |
| _____ *(ստորագրությունը)* | **Շ. Հարությունյան** |